

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Է. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԸ՝ ՄԵՐ ՕՐԵՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ
ՀՈՒՄԱՆԻՍՏ (ծննդյան 85-ամյակի առթիվ)

ՊՈՂՈՍՅԱՆ Գ. Ա., ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ս. Գ.



Անվանի մշակութաբան, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մարգարի Մարգարյանը ծնվել է 1929 թ. դեկտեմբերի 24-ին Երևանում, տոհմիկ մտավորականների ընտանիքում: 1953 թ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ապա Մոսկվայի պետական համալսարանի

ասպիրանտուրան՝ արտասահմանյան փիլիսոփայության գծով:

Լիարժեք դաստիարակությունն ու փայլուն կրթությունը ապա-գա գիտնականին ապահովեցին այնպիսի բարոյական նկարագիր, որի հիմքում բնածին բարեկրթությունն էր, ինքնադաստիարակության ու կրթության ներդաշնակ միասնությունը, որն էլ կանխորոշեց նրա գործունեության ու գիտական հետաքրքրությունների հետագա ընթացքն ու ուղղվածությունը: Մարգարյան-մարդու բարոյական որակները պայմանավորեցին նրա կողմնորոշումը՝ համամարդկային արժեքներ, բարու զգացում, արդարություն ու խղճի թելադրանք, համապրում (էմպատիա), այլակարծության հանդեպ հանդուրժողականություն, ազնվություն ու չափի նուրբ զգացողություն: Այս հատկանիշները, ինչպես և գիտական գործունեության բնույթն ու արդյունքները թույլ են տալիս նրան դասել առաջավոր մշակույթի արտահայտիչների թվին: Է. Մարգարյանը հումանիստ էր այս հասկացության ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ բարոյահոգեբանական, գաղափարական իմաստներով: Նա ոչ թե հումանիզմի հետևորդ էր, այլ ամբողջությամբ համակված էր հումանիզմով:

Հրաժարվելով դիվանագիտական կարիերայից՝ նա սկսեց զբաղվել գիտական գործունեությամբ: Խոստումնալից էր Է. Մարգարյանի մուտքը փիլիսոփայության բնագավառ. 1958 թ. Մոսկվայում պաշտպանեց «Հասարակական շրջապտույտի հայեցակարգի պատմական ակնարկ և քննական վերլուծություն» թեմայով թեկնածուական, իսկ 1967-ին՝ «Հասարակական կյանքի համակարգային հետազոտության

մեթոդաբանական հիմնախնդիրները» թեմայով դոկտորականատենախոսությունները: Վերջինս ԽՍՀՄ ԲՈՀ-ը որակեց որպես հասարակագիտության բնագավառում ժամանակի լավագույն հետազոտական աշխատանքներից մեկը: Այս ուսումնասիրությունները որպես յուրատեսակ գիտական հարթակ ծառայեցին՝ սոցիոլոգիայից անցում կատարելու մշակութաբանության բնագավառ, որտեղ, ինչպես ինքն էր վկայում, այդ տարիներին ավելի մեղմ էին քաղաքական ու գաղափարախոսական սահմանափակումները հետազոտողների նկատմամբ:

Պրոֆեսոր Է. Մարգարյանն ավելի քան կես դար աշխատել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում՝ լինելով նրա նվիրյալներից ու գիտության քրմերից մեկը: Այստեղ էլ նա կազմակերպել ու երկար տարիներ (1973 թվականից) ղեկավարել է Խորհրդային Միության միակ՝ Մշակույթի տեսության բաժինը, որտեղ նրա ղեկավարությամբ կազմավորվել էր մշակույթաբանների մի հետաքրքիր ու կարող համախումբ՝ Կ. Մարինգու-յան, Է. Մելքոնյան, Բ. Բարսեղյան, Ս. Ենգիբարյան և ուրիշներ, որոնք, ըստ էության, դարձան նրա գիտական դպրոցի սաները և գաղափարների առաջին զարգացնողներն ու տարածողները:

Է. Մարգարյանի երկարամյա գիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի՝ անցյալ դարի 50-ական թթ. կեսերից մինչև 80-ական թթ. կեսերը և 80-ականների կեսերից մինչև իր կյանքի վերջը:

Առաջին շրջանն առանձնանում է մշակույթի տեսության հիմնախնդիրների հետազոտության բնագավառում լուրջ ձեռքբերումներով: Անցյալ դարի 60-80 թթ. նրա մշակած հասարակության՝ որպես համընդհանուր «հարմարող-հարմարեցնող» համակարգի, մարդկային գործունեության՝ իբրև կենդանի համակարգերի տեղեկատվորեն ուղղորդվող ակտիվության, մշակույթի՝ որպես մարդկային գործունեության վերկենսաբանական համընդհանուր եղանակի (տեխնոլոգիայի), որի միջոցով խթանվում, շահադրդվում, ծրագրավորվում, կատարվում, վերարտադրվում և փոփոխվում է այդ գործունեությունը, ինչպես նաև մշակութային ավանդույթների գիտական բացատրության չափազանց ազդեցիկ ուղղությունները 90-ականներին ռուսաստանցի մասնագետներն անվանեցին Հայկական մշակութաբանական դպրոց:

Այդ դպրոցը ծագել է մշակութաբանության հասարակական-սոցիալական դպրոցի ներկայացուցիչների (Ն. Դանիլևսկի, Օ. Շպենգլեր, Ա. Թոյնբի և ուրիշներ) ու հատկապես ամերիկացի հայտնի մշակութաբան Լ. Ուայտի (1900-1975) հայացքների քննադատական վերլուծության ու ստեղծագործական զարգացման ճանապարհով: Է. Մարգարյանի կարծիքով՝ թեև մշակութաբանության գաղափարը և հասկացությունն իրարից անկախ ծնվեցին Արևմուտքի երկրներում (Գերմանիայում և ԱՄՆ-ում), սակայն այնտեղ մինչև այսօր դրանք չեն ընկալվում իբրև գիտակարգ: Այս հասկացության նկատմամբ առավել հետաքրքրություն առաջացավ ավելի

ուշ՝ մոտ 40 տարի անց, երբ մշակութաբանությունն արդեն էականորեն զարգացել և հիմնավորվել էր Հայաստանում՝:

Է. Մարգարյանը առաջիններից էր Խորհրդային Միությունում, որ սկսեց հանգամանորեն ուսումնասիրել մշակույթի տեսության տրամաբանական-մեթոդաբանական խնդիրները՝ հանդես գալով այդ գիտության՝ իբրև հասարակագիտության յուրահատուկ բնագավառի առանձնացման գիտական անհրաժեշտության պահանջով: Նա 80-ական թթ. սկզբներին համակարգորեն մշակեց այդ տեսության հիմքերը և գիտական հասարակայնությանը ներկայացրեց «Մշակույթի տեսությունը և ժամանակակից գիտությունը»², իսկ ավելի ուշ՝ «Համաշխարհային ստրատեգիական կառավարման ունակությունը»³ մենագրությունները: Վերոհիշյալ աշխատություններում շարադրվեց նաև ավանդույթների դինամիկայի ընդհանուր տեսությունը, որը հեղինակը կոչեց ավանդութաբանություն, իսկ ավանդույթը սահմանեց որպես մարդկային ցանկացած գործունեության խմբային կարծրատիպ՝ որպես ուսուցման արդյունք:

Ռուսաստանում լույս տեսած «Մշակութաբանություն: Հանրագիտարանային բառարանում» Մարգարյան-մշակութաբանի մասին ասվում է. «Մշակույթի տեսական հիմնախնդիրների հայտնի հետազոտող: Նշանակալից ավանդ ունի «մշակույթը որպես համակարգ» տեսական հիմնախնդրի մշակման մեջ, հայրենական գիտությունում առաջին անգամ սկսեց կիրառել «կուլտուրոլոգիա», տերմինը, իսկ «լոկալ կուլտուրա» տերմինով առաջարկեց բնութագրել էմպիրիկորեն գոյություն ունեցող կուլտուրաները: Հայտնի է որպես կուլտուրայի տեխնոլոգիական հայեցակարգի կողմնակից»⁴:

Է. Մարգարյանի մշակած մշակութաբանական ու ավանդութաբանական տեսության հիմնական դրույթներն են՝

- սովորույթի ուժով «մշակույթ» հասկացության բովանդակությունն ամենից առաջ հանգեցվում է արվեստին և դրա հետ կապված մի շարք այլ երևույթների, որի հետևանքով մարդիկ իրենց զրկում են կարևորագույն կատեգորիայից, որը կոչված է արտահայտելու գործունեության իրականացման ընդհանուր, վերկենսաբանորեն մշակված համընդհանուր եղանակը (տեխնոլոգիան):

- «մշակույթ» հասկացության բովանդակության անհարկի, չարդարացված նեղացման մասին է խոսում նաև այն փաստը, որ այսօր գիտության մեջ լայնորեն օգտագործվում են մի շարք մշակութաբանական

¹ Маркарян Э. С. Гуманизм 21-го столетия. Идеология самосохранения человечества, Е., 2008, с. 401.

² Маркарян Э.С. Теория культуры и современная наука/логико-методол. анализ/, М., 1983.

³ Edward S. Markarian. Capacity for world strategic Management, Yerevan, 1998.

⁴ Хоруженко К. М. Культурология. Энциклопедический словарь, Ростов-на-Дону, 1997, с. 289.

հասկացություններ՝ նյութական մշակույթ, հոգևոր մշակույթ, բարոյական մշակույթ, քաղաքական մշակույթ, գիտակրթական մշակույթ և այլն. դա փաստում է, որ հասկացությունը ներառում է ընդհանուր անփոխարինելի իմաստային նշանակություն, որն արդարացնում և հնարավոր է դարձնում բառակապակցությունների կիրառությունը՝ վկայելով քննարկվող երևույթի ապշեցուցիչ իմաստային բազմազանության մասին.

- մշակույթը, ըստ իր ելակետային կողմնորոշման, հարմարողական մեխանիզմ է, որի միջոցով ինքնապահպանման նպատակով հասարակությունը համապատասխանեցվում է շրջապատող միջավայրին, բնությանը.

- հասարակությանը բնորոշ կյանքի տիպը կոչվում է սոցիո-մշակութային այն հիմնավորմամբ, որ մշակույթը, ներթափանցելով հասարակական օրգանիզմի բոլոր «ծակոտիններից», որոշում է մարդկանց կենսագործունեության ոլորտների կարգը.

- մշակույթին հատուկ են նաև մարդկանց նորամուծական ու կարծրատիպային վարքի փոխադարձ փոխարկման մեխանիզմներ, որոնք արտացոլվում են մշակութային ավանդույթների շարժընթացում և ընկալվում որպես մարդկային գործունեության խմբային կարծրատիպեր.

- «մշակույթը» կյանքի է կոչվել՝ իրականացնելու մի շարք հիմնարար գործառույթներ: Դրանցից են մարդկային գործունեության իրանման, շահադրդման, ծրագրավորման, համակարգման, անհատական ու հասարակական պահանջմունքների բավարարման, ժողովուրդների ինչպես փոխադարձ, այնպես էլ շրջապատող բնական համայնքների հետ փոխազդեցության, հասարակական կյանքի վերարտադրության ու փոփոխության գործառույթները:

Է. Մարգարյանի գիտական գործունեության ու գաղափարների ազդեցությամբ մեզանում իրականացվեցին հետաքրքիր մշակութաբանական հետազոտություններ, գրվեցին դասագրքեր, բուհերի, մասնավորապես ԵՊՀ, ՀՊՏՀ ուսումնական ծրագրերում ընդգրկվեց և այսօր էլ հաջողությամբ ուսուցանվում է «Մշակութաբանություն և հայ մշակույթի պատմություն» դասընթացը: Աճեց հայ մշակութաբանների մի ամբողջ սերունդ՝ Ս. Հարությունով (Մոսկվա), Ա. Մարգարյան, Ս. Մարգարյան, Գ. Մելքունյան, Յու. Հովականյան, Մ. Նիկողոսյան, Է. Աբրահամյան (Տաշքենդ) և այլք, որոնք հաջողությամբ շարունակում են Է. Մարգարյանի սկսած գործը:

Այսօր Է. Մարգարյանն ստեղծած դպրոցը բազմաթիվ հետևորդներ ունի նաև արտասահմանյան երկրներում՝ հատկապես Ռուսաստանում: Այդ երկրի գիտական շրջանակներում նա ճանաչվում է իբրև «ռուսական մշակութաբանության սկզբնավորող»⁵: Ավելին, Է. Մարգարյանն ընդունվում է որպես երկու ժողովուրդների, երկու երկրների՝ Հայաստանի և Ռուսաստանի

⁵ Флиер А. Я. К открытию новой рубрики (Философские науки, 2000, - 2, с. 17).

մշակութաբան-փիլիսոփա⁶: Բացառիկ մի ճակատագիր, որը չի ունեցել անգամ նշանավոր Պոլ Հոլբախը, որը թեև ծագումով գերմանացի է, սակայն ամբողջ աշխարհը նրան ճանաչում է որպես ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա: Է. Մարգարյանի գիտական գործունեության որոշ ուղղություններ ունեն գուտ ազգային տեսանկյուններ, մի բան, որ արտացոլվել է նրա համապատասխան ուսումնասիրություններում⁷: Է. Մարգարյանը ավելի քան կես դար Հայաստանի յուրատեսակ գիտնական-դեսպան էր փիլիսոփայության, սոցիոլոգիայի, մշակութաբանության բնագավառներում՝ ամենից առաջ Ռուսաստանում, որտեղ հրատարակվել է նրա աշխատությունների մեծ մասը, ապա և աշխարհի մյուս երկրներում՝ Հայաստանը ներկայացնելով արտասահմանյան գիտական մամուլում, միջազգային տարբեր գիտական հանդիպումներում ու համաժողովներում:

Է. Մարգարյանի ելակետային տեսական սկզբունքներն ընդհանրացված իրենց արտահայտությունը գտան մի շարք երկրներում, նաև Հայաստանում կազմակերպված գիտական համաժողովների և բանավեճերի քննարկումներում, այստեղ սպազորված նյութերում, «Մշակույթի տեսություն» ընդհանուր խորագրով ընտիր երկերի նրա ժողովածուներում՝ հրատարակված Մոսկվայում 1986-87 թթ. գերմաներեն, իսպաներեն, արաբերեն և այլ լեզուներով:

Է. Մարգարյանի գիտական գործունեության երկրորդ շրջանին բնորոշ է հումանիստական ուղղվածությունը՝ խարսխված առաջին շրջանի գուտ տեսական գործունեության արդյունքների վրա: Ավանդաբար մարդկային գիտակցության մեջ հումանիզմը զուգորդվում է օգնության կարիք ունեցողների նկատմամբ կարեկցանքի, զթասրտության և մի շարք այլ զգացումների հետ: Ընդունելով այդ սպրումների նշանակալիությունը, ըստ նրա, մարդկության գլխին կախված մահացու սպառնալիքների համատեքստում դրանք պետք է հանդես գան որպես որակապես նոր բնույթի հումանիստական գաղափարախոսության ու գործունեության բաղադրիչներ՝ նպատակառոտորված ինքնապահպանության խնդրի լուծմանը:

Է. Մարգարյանի այս շրջանի գիտական ու կազմակերպչական գործունեության վրա էական ազդեցություն ունեցավ համագործակցությունը Մարդկության գոյատևման ու զարգացման միջազգային ֆոնդի (1988-1992) հետ, որի շտաբ-բնակարանները Մոսկվայում, Վաշինգտոնում, Ստոկհոլմում

⁶ Մարգարյան Է. Ս., Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 3, Ե., 1999, էջ 603-604:

⁷ Կենսաապահովման մշակույթը և էթոսը: Էթնոմշակութաբանական հետազոտության փորձ (հայ-գյուղական մշակույթի նյութերով), կոլեկտիվ մենագրություն: Ե., 1983, 316 էջ: Մարգարյան Է. Ս., Հայ ժողովրդի մշակույթի գավառայնացմանը հակազդող հնարավոր միջոցների մասին (Աշխարհայացքայինը ժամանակակից հայ կրթամշակութային համակարգում), Ե., 2002, էջ 66-82: Маркарян Э.С. Глобальные аспекты геноцида армян. Опыт культурологического анализа, Е., 2005.

էին⁸: Շնորհիվ դրա՝ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում նրա նախաձեռնությամբ ստեղծվեց Գոյատևման ու զարգացման հիմնարար ռազմավարական հետազոտությունների բաժինը, իսկ 1994-ին՝ Գոյատևման ու զարգացման ռազմավարությունների մշակմանն աջակցող միջազգային ասոցիացիան՝ ԳՁՌՄԱՄ (Երևան), որի նախագահն էր մինչև կյանքի վերջը: Ավելի ուշ՝ 1998 թ. լույս տեսած «Համաշխարհային ստրատեգիական կառավարման ունակությունը» մենագրությունում, շարադրվեցին նաև վերոհիշյալ ասոցիացիայի ծրագրային նպատակներն ու խնդիրները: Այս ուղղությամբ Է. Մարգարյանի գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփված են «21-րդ դարի հումանիզմը: Մարդկության ինքնապահպանման գաղափարախոսությունը» մենագրության մեջ, որ հրատարակել է Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը: Ներածականում ասվում է՝ մենագրությունը «կարելի է համարել գոյատևման-զարգացման ռազմավարական հիմնախնդիրների ոլորտի ձեռնարկ»⁹:

Ըստ Է. Մարգարյանի՝ այսօր մարդկության սոցիոմշակութային էներգիայի մի չնչին մասն է միայն ծախսվում գոյատևման ռազմավարական նպատակների իրականացման ուղղությամբ. դրա առյուծի բաժինն ուղղվում է սպառազինությունների մրցավազքի ապահովմանը, տեղային բախումների թվացյալ լուծմանը: Եվ քանի որ սոցիոմշակութային էներգիան ինստիտուցիոնալ ուղղվածություն ունի, ապա, նրա մոտեցմամբ, XXI դարի նախագծի նպատակադրումը կարող է բոլոր մակարդակի ինստիտուտների, դարաշրջանի իրողությունների՝ գոյատևման ու զարգացման ռազմավարական հրամայականների հետ համապատասխանության ապահովման ճանապարհով լինել: Է. Մարգարյանի հայեցակարգի համաձայն՝ համաշխարհային քաղաքակրթությունն այսօր հայտնվել է «ծուղակում», որի մեջ ներքաշվել է տեխնածին, ապա նաև սպասարկման հասարակության կողմից՝ դրանց բնորոշ ամենաթողության ու սպառողական հոգեբանությամբ, որը ներկայանում է երկու՝ «ճանաչողական» ու «նորմատիվ-արժեքային» ծուղակների տեսքով:

«Ճանաչողական ծուղակը» էական անհամապատասխանությունն է այս կամ այն երևույթի, գործընթացի, դրանց իրական բնույթի ընկալման, գիտության ու կրթության համակարգի զարգացման առկա գերակայությունների, գիտելիքների ու մասնագետների պատրաստման ու օգտագործման եղանակների և ժամանակակից դարաշրջանի կողմից դրանց առաջադրվող ռազմավարական պահանջների միջև: «Ճանաչողական ծուղակի» կարևոր բաղկացուցիչներից է նաև հասարակագիտությունը՝ իր այսօրվա ոչ այնքան նախանձելի վիճակով: Դա, ըստ Է. Մարգարյանի

⁸ Маркарян Э.С. Императивы экологического выживания и наука: поиск новой стратегии. Международный фонд за выживание и развитие человечества, Пущино, 1989.

⁹ Маркарян Э.С. Гуманизм 21-го столетия, с. 18.

բնութագրման, արդի քաղաքակրթության արհիլեսյան գարշապարն է, որը արմատական բարեփոխման կարիք ունի:

«Արժեքային-նորմատիվ ծուղակի» բովանդակությունն առանձնանում է մի կողմից՝ հնացած, իրենց դարն ապրած կայսերական մտածելակերպի, մշակույթի (ներառյալ՝ նոր կայսերական տարբերակները) արժեքների ու նորմերի, մյուս կողմից՝ մարդկության գոյատևման ու զարգացման ռազմավարական հրամայականների միջև առաջացած անհամապատասխանությամբ:

Եթե «ճանաչողական ծուղակից» դուրս գալու համար մարդկությունից պահանջվում է լարել մտավոր բոլոր ունակությունները, ապա «արժեքային-նորմատիվ ծուղակի» դեպքում ժամանակակից քաղաքակրթությունը զգում է նոր, հումանիստորեն կողմնորոշված համապատասխան հիմքի անհրաժեշտություն: Ավելին, զգացվում է գլոբալ էթիկայի՝ որպես մարդկության գոյատևման արժեքաբանական հրամայականի ստեղծման կարիքը: Գլոբալ էթիկայի հոգեբանական բազան պետք է կազմի մարդկությանը հատուկ համապարման զգացումը: Այսօր հարկ է գիտակցել նաև մարդասիրության մեծ «պակասությունը», «քաղցր» արդի քաղաքակրթության մեջ, որը նույնպես, վերջին հաշվով, կարող է հանգեցնել մարդկության կործանման:

Այսպիսով՝ հումանիզմը մարդկության ինքնապահպանության չափազանց կարևոր պահեստային, ռազմավարական ռեսուրս է, և աշխարհը կանգնած է հումանիստական հեղափոխության՝ իբրև ազգերի ու ռոջ մարդկության գոյատևման ու զարգացման հիմնական պայմանի առջև: Մարդկությունը պետք է կենտրոնացնի իր մտավոր ու բարոյական ռեսուրսները և քաղաքակրթության զարգացման տարերային տիպից անցում կատարի դեպի դրա հումանիստորեն ուղղորդվող տեսակը: Սա կարևոր է նաև աշխարհի ժողովուրդների հետագա մերձեցման, համախմբման անհրաժեշտության գիտակցման տեսանկյունից: Է. Մարգարյանը խոսում է նաև քաղաքակրթության զարգացման համաշխարհային ու ազգային տեսանկյունների փոխհարաբերությունների, փոքր ազգերի գոյատևման ու զարգացման, հետագա ճակատագրի ու հեռանկարների մասին:

Ականավոր գիտնականի մշակած հայեցակարգերը լայն ճանաչում ունեն մասնագետների շրջանում՝ դառնալով նաև միջազգային գիտական խորհրդակցությունների հիմք: Դրանցից վերջինը՝ «Նոր մարտահրավերներ ու գլոբալ սպառնալիքներ միջազգային անվտանգությանը 21-րդ դ. սկզբին: Անցումը քաղաքակրթության ուղղորդվող զարգացմանը որպես մարդկության ինքնապահպանության պայման» թեմայով, կազմակերպել էր ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը (Երևան, 2004 թ. նոյեմբեր): Է. Մարգարյանի պնդմամբ՝ քաղաքակրթության բոլոր օղակները (ներառյալ՝ նյութական տեխնոլոգիաները), մարդկային գոր-

ծունեության բոլոր ոլորտները պետք է ծառայեն մարդկության ինքնապահպանման նպատակին¹⁰:

Այս համատեքստում հրատապ է նաև ժամանակակից ահաբեկչության հիմնախնդրի քննությունը: Ահաբեկչությունը բռնության մշակույթի դրսևորման ձևերից մեկն է: Ահաբեկչական գործողություններ նախկինում ևս կատարվում էին, սակայն դրանք երբեք օրգանապես միահյուսված չէին մարդկության ամենօրյա կեցության ռիթմին՝ դառնալով նրա գոյության տարրերից մեկը: Ցավոք, այսօր ահաբեկչությունը մեր դարաշրջանի չարագույն խորհրդանիշներից է: Արձանագրելով, որ ահաբեկչությունը բռնության մշակույթի ձևերից մեկն է, պետք է նկատել, որ տվյալ դեպքում դիտարկվում են բռնության չօրինականացված ձևերը: Ահաբեկչությունը էապես տարբերվում է պատերազմից կամ հանցագործներին պատժելուց, որոնք արդեն վերաբերում են բռնության մշակույթի օրինականացված ձևերին:

Արդի դարաշրջանի ահաբեկչության արմատները քաղաքակրթության տարերային, ծայրահեղ անհավասարաչափ զարգացման ու խոր հակասությունների մեջ են, որոնք ծնում են աստեղության ու անհանդուրժողականության զգացում, մթնոլորտ, կրոնական ֆանատիզմ, գործազրկություն, աղքատություն, հաճախակի կիրառվող «երկակի չափորոշիչների» քաղաքականություն և այլն՝ պարարտ հող ստեղծելով ահաբեկչության դրսևորումների համար: Վերջինիս դեմ արդյունավետ պայքարի նպատակով անհրաժեշտ է վերացնել կամ գոնե չեզոքացնել դրանք ծնող պատճառները: Իսկ այդ խնդիրը հնարավոր չէ լուծել առանց համակարգված ջանքերի՝ ուղղված բռնության գաղափարախոսության ու պրակտիկայի իսպառ վերացմանը, որին հնարավոր է հասնել համաշխարհային քաղաքակրթության հումանիստական վերափոխման ճանապարհով¹¹:

Ահաբեկչությունն ինքնին սարսափելի երևույթ է, սակայն առանձնապես սարսափելի է պետականորեն հովանավորվող զանգվածային ահաբեկչությունը՝ նպատակաուղղված մարդկանց խմբերի, ամբողջ ժողովուրդների ոչնչացմանը՝ ըստ էթնիկական հատկանիշի: Իբրև հայ գիտնական՝ Է. Մարգարյանը չէր կարող անտարբեր լինել հայերի ցեղասպանության հիմնախնդրի հետազոտման նկատմամբ: Դրանով նա սկսել է զբաղվել սրանից քսան տարի առաջ, և նրա արտահայտած որոշ

¹⁰ **Маркарян Э.С.** Программный доклад. Международный симпозиум. Новые вызовы и глобальные угрозы международной безопасности в начале 21-го века. Переход к направляемому развитию цивилизации как условие самосохранения человечества, Е., 2004; **Edward S. Markarian.** Program Report. International Symposium. New challenges and global threats to international security at the turn of the 21st century. Transition to a guided evolution of civilization as a condition for self-preservation of humanity. Yerevan, 2004.

¹¹ **Маркарян Э. С.** Гуманизм 21-го столетия, с. 411-412.

զաղափարներ ու եզրակացություններ պահպանել են իրենց գիտական արժեքը նաև այսօր՝ Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցի նախօրեին:

Հիմնական կրթությամբ լինելով միջազգայնագետ-իրավաբան՝ Է. Մարգարյանը հանգամանորեն վերլուծում է 1921 թ. Մոսկվայի և Կարսի ռուս-թուրքական պայմանագրերը, ինչպես նաև Լոզանի 1922-23 թթ. կոնֆերանսի նյութերը և փաստում, որ, ըստ էության, միջազգայնորեն ոչ միայն չպատժվեց, այլև, փաստորեն, խրախուսվեց Թուրքիայի իրականացրած ցեղասպանությունը հայերի նկատմամբ:

Օգտվելով հիմնարար պատմագիտական հետազոտությունների արդյունքներից, կիրառելով իր մշակած համակարգային, մշակութաբանական ու համընդհանրական մոտեցման սկզբունքները, առաջարկելով բազմաթիվ նոր գիտական հասկացություններ (ցեղասպանածին երկիր, ցեղասպանածին ակտիվություն, ցեղասպանության խրախուսում, ցեղասպանության ընդլայնված վերարտադրություն, պատմական արդարություն, հանցանքի ու պատժի օրգանական կապակցվածության օրենք, ցեղասպանության հրամայական պատժում, էմպատիա, էմպատիկ մեթոդ, անկեղծ զոջում, կատարված հանցանքի համար անվերապահորեն ներողության հայցում և այլն)՝ Է. Մարգարյանն իրականացրել է հայերի ցեղասպանության վերաբերյալ իրավաբեագիտական, հոգեբանաբարոյագիտական, մշակութաբանաբաղաբակրթական հետաքրքիր, ուրույն ուսումնասիրություն¹²:

Է. Մարգարյանն անդրադարձել է նաև ցեղասպանագիտության չորս հիմնական կանխադրյալների քննության խնդրին.

1. Ցեղասպանությունը երբեք և ոչ մի տեղ չի կարող տարածքների, ինչպես նաև գոծ-ժողովրդի ունեցվածքին տիրապետելու եղանակ լինել:

2. Ցեղասպանության իրականացումը ենթադրում է խիստ պատժամիջոցների կիրառում... Եթե երկրին, որը կատարել է ցեղասպանություն..., հաջողվել է խուսափել պատժից, ապա դա ամենևին չի նշանակում, թե նա դրանից խուսափել է ընդմիջտ:

3. Ցեղասպանածին իրադրության լուծման կարևորագույն պայման է անկեղծ զոջումը կատարած հանցագործության համար: Առանց այդ պայմանի կատարման չի կարող տեղի ունենալ սոցիոմշակութային լարվածության լիցքաթափում ժողովուրդների փոխհարաբերություններում, որոնք ներգրավված են տվյալ իրադրության մեջ:

4. Կատարված ցեղասպանության ժխտումը հանցավոր արարք է, որի համար ժխտողները պետք է կրեն լուրջ պատասխանատվություն:

Այնուհետև Է. Մարգարյանը, ելնելով այս կանխադրյալներից, առաջադրում է նոր հիմնախնդիր. անհրաժեշտ է ցեղասպանության հուզական, էմպիրիկ նկարագրությունից ու բացատրությունից անցում կատարել ցեղասպանության վերաբերյալ գիտական տեսության՝ ցեղասպանագիտության ստեղծմանը:

¹² Տե՛ս Մարգարյան Է. Ս. *Глобальные аспекты геноцида армян.*

Նա բնութագրում է նաև թուրքական պետության, նրա հին ու նոր կառավարող շրջանների մշակութաբանաքաղաքակրթական էությունը՝ մեջ բերելով նշանավոր անգլիացի պատմաբան ու սոցիոլոգ Ա. Թոյնբիի ժամանակին Թուրքիային տրված գնահատականը: Ըստ այդմ, Ա. Թոյնբին վերջինիս վերագրեց այն տիպի քաղաքակրթությունների շարքը, որոնք կանգ են առել իրենց զարգացման մեջ (*arrested civilizations*)¹³: Գուցե և տնտեսական, տեխնիկական զարգացման, «պատմական կեղծարարությունների, դիվանագիտական աճպարարությունների առումով» Թուրքիան անցած 100 տարվա ընթացքում առաջադիմել է, սակայն դա, այնուամենայնիվ, չի վերաբերում նրա բարոյական զարգացմանը, առաջադիմությանը: Ասվածի ապացույցը վերջինիս այսօրվա պահվածքն է Հայկական հարցի ու հայերի ցեղասպանության հիմնախնդրի առնչությամբ: Ի դեպ, Ա. Թոյնբին առաջիններից է, որ անդրադարձել է հայերի ողբերգությանը «Հայկական սարսափները. մի ազգի բնաջնջումը» (1915) իր հայտնի ուսումնասիրությամբ:

Մարգարյանի կարծիքով՝ հայերի նկատմամբ Թուրքիայում իրականացված ցեղասպանության ճանաչման, դատապարտման, նյութական ու բարոյական հատուցման խնդիրը այսօր դարձել է համայն մարդկության բարոյականության յուրատեսակ բարոմետրը: Նա նաև հիշեցնում է, որ աշխարհում գոյություն ունեն նման խնդիրների լուծման քաղաքակրթականներ: Այդպիսի ընդհանուր մոդել, ինչպես հայտնի է, կիրառվել է Գերմանիայի կողմից հրեաների նկատմամբ: Ջոջման նման մոդելի մշակման մեջ վճռորոշ դեր խաղաց հումանիստական ներուժը, որը հատուկ է գերմանական ժողովրդին: Այն անհապաղ պետք է կիրառվի նաև հայերի և թուրքերի միջև հարաբերությունների կարգավորման նպատակով:

Հեղինակի գնահատմամբ՝ Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը, Հայկական հարցը վերաբերում են ոչ միայն հայերին: Կատարված չարագործությունն անպատիժ թողնելը, ըստ էության, ոչ այլ ինչ է, քան ցեղասպանածին գործունեության խրախուսում, որի ծայրահեղ բացասական ազդեցությունը մարդկային քաղաքակրթության զարգացման վրա բնորոշվում է որպես հայերի ցեղասպանության գլոբալ ասպեկտ: Ցավոք, ժամանակը, հատկապես մեր օրերի իրադարձությունները, որոնք տեղի են ունենում Միջին Արևելքում և Երաբում, հաստատում են հետազոտողի գիտական կանխատեսումները:

Դեռևս 2000 թ. Է. Մարգարյանն առաջարկել է ապրիլի 24-ը հռչակել Սգո համաշխարհային օր, որը կխորհրդանշի XX դարի առաջին մեծածավալ ցեղասպանությունը, տարերթիվ, որն ամեն տարի կնշեն ոչ միայն հայերը, այլև մոլորակի մյուս ժողովուրդները: Դա կվկայի ցեղասպանության՝ որպես անհանդուրժելի երևույթի իսպառ արմատախիլ անելու՝ մոլորակի ժողովուրդների ցանկության ու վճռականության մասին:

¹³ Նույն տեղում, էջ 9:

Վերլուծելով խաղաղության գաղափարը՝ Է. Մարգարյանը համոզված է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և հատկապես վերջին երեք տասնամյակների ընթացքում այն կրել է էական փոփոխություններ: Եթե նախկինում արտահայտում էր հասարակության այնպիսի վիճակը, որը հակադիր է պատերազմին, ապա ներկայումս դրա բովանդակությունը նշանակալիորեն հարստացել է: Պայքարը խաղաղության համար, ըստ էության, դարձել է պայքար մարդկության ինքնապահպանման, հնարավոր համաշխարհային միջուկային կործանումից խուսափելու համար: Պետք է ձևավորվի քաղաքակրթության՝ իր բնույթով սկզբունքորեն այլ՝ հումանիստական կողմնորոշմամբ արժեքային նորմատիվ հիմք, որը կփոխարինի իրենց դարն ապրած կայսերական արժեքներին ու նորմերին՝ հիմնված ուժի պաշտամունքի, նվաճումների, ժողովուրդների նկատմամբ խտրականության կիրառման պրակտիկայի վրա:

Անհրաժեշտ է մշակել պատերազմի մշակույթից խաղաղության մշակույթին անցման հիմնարար սկզբունքներ ու մեխանիզմներ: Է. Մարգարյանը ներմուծել է նաև «խաղաղության որակ» հասկացությունը, որը կոչված է մարդկության ուշադրությունը կենտրոնացնել այն հանգամանքի վրա, թե ժողովուրդների կողմից ինչպես է օգտագործվում ձեռք բերված խաղաղությունը, երբ միմյանց դեմ չեն մարտնչում: Խաղաղության հիմնախնդրի լուծման բանալին «մշակույթ» երևույթի անհրաժեշտ համակարգային իմաստավորման, բացատրման և օգտագործման մեջ է¹⁴:

Մոսկվայի կուլտուրայի և արվեստների պետական համալսարանում Է. Մարգարյանի 70-ամյակի առթիվ (2000 թ.) կազմակերպվեցին գիտական ընթերցումներ՝ «Մշակույթի մասին գիտությունները և արդի դարաշրջանի հրամայականները» թեմայով, որտեղ նա հանդես եկավ ծրագրային զեկուցմամբ¹⁵:

Նրա վերջին հրապարակումը «Ծրագրային առաջարկներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարեփոխման նպատակով: Թեզիսներ 21-րդ դարի գիտակրթական մշակույթի մասին» վերնագրով գրքույկն է (2009): Խիստ խորհրդանշական է նաև այն փաստը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանած Փիլիսոփայության օրը Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում (2009թ. նոյեմբերի 20) նվիրված էր Է. Մարգարյանի ծննդյան 80-ամյակին:

Բազում հիմնախնդիրների մշակման մեջ այնքան մեծ է գիտնականի ներդրումը, որ Ամերիկյան կենսագրական ինստիտուտը (ABI) Է. Ս. Մարգարյանին ներկայացրեց «Տարվա մարդը» (1998) կոչման՝ նրան

¹⁴ *Ушу мшаին մանրամասն տե՛ս Айрапетян С. Г., Кажоян Р. А., Саркисян Д. А. Качество мира. Ретроспективный анализ оснований для номинации профессора Э.С. Маркаряна на Нобелевскую премию мира, Е., 2002.*

¹⁵ *Маркарян Э.С. Науки о культуре и императивы эпохи. Программный доклад для культурологических чтений, М., 2000.*

ընդգրկելով «500 անվանի առաջնորդների» ցուցակում, իսկ անցյալ դարի 90-ական թթ. վերջին՝ «20-րդ հարյուրամյակի ականավոր մարդը» տիտղոսի:

Ինքը՝ պրոֆեսորը, համարում էր, որ իր աշխատությունները, գաղափարներն ու ծրագրերը, գիտակարգերն ու հայեցակարգերը հայ ժողովրդի մտավոր սեփականությունն են և նպատակ ունեն բարձրացնելու Հայաստանի հեղինակությունը միջազգային ասպարեզում, մանավանդ եթե դրանք ընկալվեն, գործադրվեն ու տարածվեն նաև պետական մակարդակով:

Է. Մարգարյանը մահացել է 2011 թ. մարտի 12-ին Մոսկվայում, թաղված է Երևանի քաղաքային պանթեոնում:

Երևանի քաղաքապետարանի որոշմամբ Տերյան փողոցի 62 տան պատին (որտեղ երկար տարիներ ապրել է Է. Մարգարյանը) տեղադրվել է գրանիտե հուշատախտակ՝ ի հավերժացումն արժանավոր երևանցու հիշատակի: Ռուսաստանի Դաշնության կրթության ու գիտության նախարարության Հումանիտար գիտությունների ակադեմիայի «Փիլիսոփայական գիտությունների»¹⁶ ամսագիրը «Լոկալ քաղաքակրթությունների հայեցակարգից դեպի XXI դարի հումանիզմի իդեալները» վերտառությամբ ծավալուն բաժին է նվիրել հայ գիտնականի հիշատակին ու գաղափարներին:

Է. Մարգարյանի բարոյական նկարագրի, հայացքների, մարդասիրական գործունեության համառոտ քննությունը հիմք են տալիս դասելու նրան մերօրյա անվանի հումանիստներ Ալբերտ Շվեյցերի (1875-1965) և Դմիտրի Լիխաչովի (1906-1999) հետևորդների շարքին:

Յ. Ս. МАРКАРЯН – ВЫДАЮЩИЙСЯ ГУМАНИСТ НАШИХ ДНЕЙ

(к 85-летию со дня рождения)

ПОГОСЯН Г. А. , АЙРАПЕТЯН С. Г.

Резюме

Получив юридическое образование, а именно, окончив Московский государственный институт международных отношений, Э. Маркарян отказался от дипломатической карьеры, всецело посвятив себя науке.

В 1973 году в Институте философии и права АН Армении им был создан единственный в Советском Союзе Отдел теории культуры. В 60-80-х гг. XX в. он разработал ряд фундаментальных концепций, на основе которых была создана «Армянская культурологическая школа»,

¹⁶ Философские науки, 2012, - 3, с. 143-157.

получившая признание как в Армении, так и в других странах и особенно в России, где Э. Маркаряна считают основателем отечественной культурологии. Его культурологические исследования вызвали огромный научный интерес и были изданы на английском, немецком, испанском, арабском и других языках.

Будучи основателем и руководителем Отдела ключевых стратегических проблем выживания и развития Института философии, социологии и права НАН РА, он явился также инициатором создания в Ереване Международной Ассоциации содействия стратегии выживания и развития, в рамках которой занимался изучением животрепещущих проблем XX столетия: проблемой выживания и развития современной мировой цивилизации, мира и сотрудничества между народами, первого геноцида XX в. – геноцида армян в Турции, современного терроризма и т.д.

Международный масштаб и размах научной деятельности Э. Маркаряна, его бескорыстное служение великим идеям гуманизма дают основания назвать его последователем выдающихся гуманистов нашего времени Альберта Швейцера и Дмитрия Лихачева.

**E. MARGARYAN, GREAT HUMANIST Of OUR TIME
(on the 85th Birth Anniversary)**

G. POGHOSYAN, S. HAYRAPETYAN

Abstract

Eduard Margaryan is an outstanding humanist of our time due first to his high moral standards, integrity, research interests and the values that he espoused during his lifetime. Not only did he subscribe to the ideas of humanism but was also inspired with and full of those ideas. His personal qualities largely pre-determined his professional and research interests. Upon graduation from the Department of Law, he preferred social science and the humanities to a career in diplomacy. He became a professional philosopher and a specialist in Culture Studies and made a significant contribution to the development of the latter.

The international scale and scope of E. Margaryan's innovatory research activities and his sincere devotion and selfless service to the great ideas of humanism give us ample grounds to mention his name among the followers of outstanding humanists of our epoch Albert Schweitzer and Dmitry Likhachov.